ՀՍՍՀ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՌՈՒԲԵՆ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

Գիտատեխնիկական առաջադիմության արդի պայմաններում նրա նվաճումների ներդրումը արտադրության մեջ հանգեցրեց ՀՍՍՀ բանվոր դասակարգի համակողմանի զարգացմանը։ Վերջինս մասնավորապես արտահայտվեց նաև քանակական ու որակական փոփոխություններով, որոնց էլ մենք ստորև կանդրադառնանք։

Քննվող ժամանակաշրջանում Հայաստանում շարունակվում էր բանվոր դասակարգի թվաքանակի աճի պրոցեսը։ Այսպես, եթե 1960 թ. հանրապետությունում բանվորների թվաքանակը (ներառյալ կրտսեր սպասարկող անձնակազմը և պահպանության աշխատողները) կազմում էր 303,7 հազ. մարդ, 1970 թ.՝ 593, 3 հազ., իսկ 1980 թ. 842 հազ., ապա 1985 թ. 950 հազ. մարդ[1]։ Այս տվյալներից երևում է, որ ՀՍՍՀ-ում բանվորների թվաքանակը 1960—1985 թթ. աճել է ավելի քան 3 անգամ։ Բանվոր դասակարգի աճի նման բարձր տեմպերը պայմանավորեցին բանվորների տեսակարար կշռի բարձրացումը հանրապետության զբաղված բնակչության մեջ։ Վերջինս որակական կարևոր առաջընթաց էր հանրապետության դասակարգային կառուցվածքում, քանի որ այն նպաստեց հասարակական կյանքում բանվոր դասակարգի դերի է՛լ ավելի բարձրացմանը։ Եթե 1959 թ. բանվորների տեսակարար կշիռը ՀՍՍՀ զբաղված բնակչության մեջ կազմում էր 39,3 %, ապա 1979 թ. 61, 3 %[2]։ Այս ցուցանիշով ՀՍՍՀ-ը 1979 թ. միութենական հանրապետությունների մեջ գրավում էր 3-րդ տեղը (Ղազախական ՍՍՀ-ից և ՌՍՖՍՀ-ից հետո)։ Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում, բանվորների հիմնական մասը զբաղված էր նյութական արտադրության ճյուղերում[3]։ Սակայն արտադրողական ուժերի զարգացման ներկա մակարդակը, գիտատեխնիկական առաջադիմության լայն տարածումը, արտադրական պրոցեսների մեքենայացումն ու ավտոմատացումը հանգեցնում են զբաղված բնակչության վերաբաշխման, նյութական արտադրության ոլորտում զբաղվածների տեսակարար կշռի նվազմանը և նրանց թվաքանակի ավելացմանը՝ ոչ արտադրական ոլորտներում։ Այդ են վկայում հետևյալ տվյալները. եթե 1960 թ. ՀՍՍՀ-ում նյութական արտադրության ճյուղերում հաշվում էր զբաղված բնակչության 81,7 %-ը, իսկ ժողովրդական տնտեսության ոչ արտադրական ճյուղերում՝ 18,3 %-ը, ապա 1985 թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմում էին 71 և 29 %[4]։*

Հանրապետության ժողովրդական տնտեսության ոչ արտադրական ճյուղերում հատկապես բարձր տեմպերով է ավելանում բնակչության այն մասի տեսակարար կշիռը (այդ թվում, իհարկե և բանվորների), որը զբաղված է

---

* *Հոդվածում քննարկվում են հանրապետության բանվոր դասակարգի որակական և քանակական կազմի փոփոխությունները 1960—1980-ական թվականներին։*

1 «Народное хозяйство Армянской ССР в 1985 году», Ереван, 1986, с. 211.

2 «Итоги Всесоюзной переписи населения 1970 г.», т. 5, М., 1973, с. 26—33; «Численность и состав населения СССР. По данным Всесоюзной переписи населения 1979 года», М., 1984, с. 156.

3 «Народное хозяйство Армянской ССР в 1985 году», с. 28.

4 «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», Ереван, 1978, с. 150; «Народное хозяйство Армянской ССР в 1985 году», с. 210.

սպասարկման ոլորտում։ Այսպես, եթե 1960 թ. դրանում զբաղված բնակչության տեսակարար կշիռը կազմում էր 5,6 %, ապա 1985 թ. 9,1 %[5]։

Հասարակական աշխատանքի վերաբաշխման պրոցեսը հօգուտ ոչ արտադրական ոլորտի՝ հասարակական զարգացման օրինաչափ միտում է, բայց սոցիալիզմի կատարելագործման պայմաններում այն ունի իր առանձնահատկությունները։ Այստեղ վերաբաշխմանը նպաստում են ոչ միայն գիտատեխնիկական առաջադիմությունը, այլև կուսակցության և կառավարության կողմից կիրառվող միջոցառումները հօգուտ սպասարկման ոլորտի ճյուղերի զարգացման, որը մեծ նշանակություն ունի կոմունիստական շինարարության խնդիրների ընդհանուր լուծման համար։ Դեռևս Կ. Մարքսը նշել է, որ երկրի հարստությունը առաջին հերթին պայմանավորված է նրանով, թե որքան ավելի քիչ է արտադրող բնակչությունը ոչ արտադրողի նկատմամբ[6]։

Գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում առավել արագ տեմպերով զարգանում են արդյունաբերությունը և, մասնավորապես, նրա այն ճյուղերը (մեքենաշինություն, էլեկտրաէներգետիկա և այլն), որոնք որոշում են այդ առաջադիմությունը։ Դա էլ իր հերթին հանգեցնում է բանվոր դասակարգի ճյուղային կառուցվածքում զգալի փոփոխությունների։ Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, վերոհիշյալ ճյուղերում բանվորների թվաքանակը հատկապես արագ տեմպերով է աճում։ Այսպես, եթե 1960—1985 թթ. ՀՍՍՀ ամբողջ արդյունաբերության մեջ բանվորների թվաքանակը ավելացել է 3 անգամ, ապա մեքենաշինության ճյուղերում՝ 5,6, իսկ էլեկտրաէներգետիկայում՝ 3,1 անգամ[7]։ Միևնույն ժամանակ ժողովրդական տնտեսության այն ճյուղերում, որտեղ գիտատեխնիկական առաջադիմությունն ընթանում է բուռն տեմպերով (տվյալ դեպքում արդյունաբերության մեջ), բանվոր դասակարգի թվաքանակի աճի տեմպերը նվազում են։ Օրինակ՝ եթե 1975—1980 թթ. ՀՍՍՀ արդյունաբերական բանվորների թվաքանակը ավելացել է 63,1 հազարով, ապա 1980—1985 թթ.՝ 50,1 հազարով[8]։ Այս պրոցեսը բացատրվում է նրանով, որ արդյունաբերության մեջ արտադրության կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման լայն ներդրումն առաջին պլան է մղում բանվոր դասակարգի որակական և ոչ թե քանակական աճը, այսինքն՝ աստիճանաբար բանվոր դասակարգի էքստենսիվ զարգացումը փոխարինվում է նրա ինտենսիվ զարգացմամբ։

Զգալի փոփոխություններ տեղի ունեցան բանվոր դասակարգի սեռային կազմում։ Ժողովրդական տնտեսության ճյուղերում գիտության և տեխնիկայի նվաճումների արմատավորումը նպաստում է արտադրության մեջ կնոջ դերի բարձրացմանը։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ «Կնոջ լիակատար ազատագրության և նրան տղամարդուն իրոք հավասար դարձնելու համար հարկավոր է, որ հանրային տնտեսություն լինի, և կինը մասնակցի ընդհանուր արտադրական աշխատանքին»[9]։ Կուսակցությունը հետևողական քաղաքականություն է վարում կանանց հասարակական արտադրության մեջ ռացիոնալ ներգրավելու ուղղությամբ։ Դրա վառ ապացույցն են ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումները, որոնց կենսագործումը նպաստում է աշխատող կանանց աշխատանքային, կենցաղային և հանգստի պայմանների բարելավմանը, ժողովրդական տնտեսության ճյուղերում զբաղված բանվորների և ծառայողների կազմում նրանց տեսակարար կշռի բարձրացմանը։ Այս միտումը ցայտուն դրսևորվում է նաև մեր հանրապետությունում։ Այսպես, եթե 1960 թ. ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության ճյուղերում զբաղված բանվորների և ծառայողների թվաքանա-

---

5 Նույն տեղում։

6 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. 1, с. 214.

7 Հայկական ՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության ընթացիկ արխիվ։ Աշխատանքի և աշխատավարձի վիճակագրության բաժին։

8 Նույն տեղում։

9 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 39, էջ 251։

կում կանանց տեսակարար կշիռը կազմում էր 37,6 %, ապա 1985 թ.՝ 46,9 %[10]։ Այն հատկապես բարձր է ժողովրդական տնտեսության ոչ արտադրական ճյուղերում. 1985 թ. առևտրի և հասարակական սննդի ոլորտում այն կազմում էր 55,6 %, կապի բնագավառում՝ 48,1 %, կենցաղ-սպասարկման մեջ՝ 38,4 % և այլն[11]։ Միաժամանակ շինարարության մեջ և տրանսպորտում կանանց տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմում էր 12, 5 և 10,8 %[12]։ Այս ամենը վկայում է, որ սոցիալիզմի կատարելագործման ժամանակաշրջանում, հասարակական արտադրության մեջ տեղի է ունենում կնոջ աշխատանքի վերաբաշխում՝ հօգուտ նրա առողջության և կենսաբանական առանձնահատկությունների համար առավել բարենպաստ պայմաններ ունեցող ճյուղերի։

Գիտատեխնիկական առաջադիմության ազդեցության ներքո որոշակի փոփոխություններ են կատարվում նաև հանրապետության բանվոր դասակարգի տարիքային կազմում։ Մասնավորապես նկատվում է նրա երիտասարդացման միտում։ Այսպես, 1973—1983 թթ. ժողովրդական տնտեսության ճյուղերում զբաղվածների թվաքանակում մինչև 35 տարեկան բանվորների ու ծառայողների տեսակարար կշիռը աճել է 1,1 %-ով և ընդհակառակը՝ 60 և ավելի տարեկաններինը նվազել 1,8 %-ով[13]։ Երիտասարդ բանվորների տեսակարար կշռի աճը նպաստում է գիտատեխնիկական առաջադիմության արագացմանը, քանի որ երիտասարդությունն ավելի հեշտ է ընկալում տեխնիկական և կազմակերպչական զանազան նորույթները, որին չեն խոչընդոտում տարիների ընթացքում ձեռք բերած սովորություններն ու վարժվածությունը։ Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ երիտասարդների տեսակարար կշիռը հատկապես բարձր է բանվորական այն մասնագիտությունների մեջ, որոնք լայնորեն կիրառվում են գիտատեխնիկական առաջադիմությունը պայմանավորող ճյուղերում։ Այսպես, եթե 1980-ական թվականների կեսերին հանրապետությունում ֆիզիկական աշխատանքով զբաղվածների թվաքանակում երիտասարդ (18-ից մինչև 30 տարեկան) բանվորների տեսակարար կշիռը կազմում էր 42,8 %, ապա ֆրեզերագործների մեջ՝ 62,9, խառատների մեջ՝ 59,9, էլեկտրատեխնիկական և ռադիոէլեկտրոնային արդյունաբերության ճյուղերում զբաղված բանվորների թվաքանակում՝ 55,2, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օպերատորների մեջ՝ 76,8 % և այլն[14]։ Միաժամանակ դարբինների մեջ երիտասարդների տեսակարար կշիռը կազմում էր ընդամենը 17 %. հնոցապանների մեջ՝ 24,5, մետաղագործների ու ձուլողների մեջ՝ 30,2 զալվանողների մեջ՝ 32, 8 % և այլն[15]։ Բերված տվյալները վկայում են. որ հանրապետության բանվոր երիտասարդությունն առավել հակված է դեպի ստեղծագործ ու բովանդակալից աշխատանքը։ Վերջինս պահանջում է գիտելիքների ավելի մեծ ծավալ, տեխնիկական մտահորիզոնի ընդլայնում և ստեղծագործաբար մտածելու կարողություն։ Այս ամենը բանվոր դասակարգից պահանջում է հանրակրթական բարձր մակարդակ, որը գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում նրա կարևորագույն որակական փոփոխություններից է։ Տվյալ գործում որոշիչ դեր է խաղում ժողովրդական կրթության համակարգը և առաջին հերթին նրա գլխավոր օղակը՝ հանրակրթական դպրոցը, որն աշխատավորների կրթական մակարդակի բարձ-

---

10 Հայկական ՍՍՀ Կենտրոնական վիճակագրական վարչության ընթացիկ արխիվ։ Աշխատանքի և աշխատավարձի վիճակագրության բաժին։

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում։

14 Степан Товмасян, XXVII съезд КПСС и социальные проблемы ускорения научно-технического прогресса (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններից», 1986, № 6, էջ 10—11).

15 Նույն տեղում։

բացման նյութական հիմքն է։ 1986 թ. Հանրապետությունում գործում էր 1479 հանրակրթական դպրոց[16]։ Դրա հետ մեկտեղ 1960—1980-ական թվականներին նկատվում է հանրակրթական դպրոցների թվաքանակի որոշակի նվազում (1960 թ. 1494-ի փոխարեն, 1986 թ.՝ 1479)[17]։ Այս պրոցեսը բացատրվում է նրանով, որ հանրապետության կուսակցական և սովետական մարմինները հետևողական աշխատանք էին կատարում դպրոցի դերի ամրապնդման, ժողովրդական տնտեսության մեջ միջնակարգ և մասնագիտական կրթությամբ կադրերի ավելի լայն ու արդյունավետ օգտագործման ուղղությամբ։ Այս միջոցառումները հանգեցրին նրան, որ փակվեցին մի շարք թերի կոմպլեկտավորված տարրական ուսումնական հաստատություններ, միևնույն ժամանակ ավելացան միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները։ Վերջիններիս քանակը աճելով 1986 թ. հասավ 66-ի, 1960 թ. 38-ի փոխարեն[18]։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետությունում արագ տեմպերով աճում էին ժողովրդական կրթության զարգացման համար պետական բյուջեից առանձնացվող ծախսերը։ Եթե 1960 թ. ընդհանուր կրթության համար ՀՍՍՀ-ում ծախսվել էր 47, 8 մլն ռ., ապա 1985 թ.՝ 259,3 մլն ռ.[19]։ Այս ամենն անմիջականորեն նպաստում էր բանվոր դասակարգի կրթական ընդհանուր մակարդակի բարձրացմանը, նրա կրթական բնութագրի որակական տեղաշարժերի ուժեղացմանը։ Վերջինիս համար հատկապես կարևոր նշանակություն ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմի 1984 թ. ապրիլյան պլենումում ընդունված «Հանրակրթական և պրոֆեսիոնալ դպրոցի ռեֆորմի հիմնական ուղղությունների մասին» որոշումը, ըստ որի նախատեսվում էր կրթության ողջ համակարգի կազմակերպական-բովանդակային վերակառուցում՝ կատարելագործվող սոցիալիզմի և գիտատեխնիկական առաջադիմության պահանջներին համապատասխան։ Ռեֆորմի իրագործումը սկսվեց 1980-ական թվականների երկրորդ կեսին։ Ժողովրդական կրթության համակարգի զարգացումն ու կատարելագործումը մեծ չափով անդրադառնում էր բանվոր դասակարգի կրթական մակարդակի աճի տեմպերի վրա։ Այսպես, եթե 1959 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով հանրապետության յուրաքանչյուր 1000 բանվորից բարձրագույն (այդ թվում և թերի), միջնակարգ մասնագիտական և միջնակարգ (լրիվ և թերի) կրթություն ուներ 487-ը, ապա 1979 թ.՝ 831-ը[20]։ Այս տվյալները վկայում են, որ Հայաստանի բանվոր դասակարգն աչքի է ընկնում կրթական բավականին բարձր մակարդակով։ Հանրապետության բանվոր դասակարգի ընդհանուր կրթական մակարդակի աճի բնորոշ գծերից է տարրական կրթություն ունեցող բանվորների թվաքանակի նվազումը։ Այսպես, 1959 թ. ՀՍՍՀ-ում յուրաքանչյուր 1000 բանվորից տարրական կրթություն ուներ միայն 307-ը, իսկ 1979 թ.՝ 135-ը[21]։

Գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում տեղի է ունենում նաև բանվոր դասակարգի տարբեր ջոկատների կրթական մակարդակի մերձեցում։ Զգալի փոփոխություններ են կատարվում ՀՍՍՀ-ի գյուղական բանվորների կրթական ընդհանուր մակարդակում։ Եթե 1959 թ. հանրապետության յուրաքանչյուր 1000 գյուղական բանվորից բարձրագույն (այդ թվում և թերի), միջնակարգ մասնագիտական և միջնակարգ (լրիվ և թերի) կրթություն ուներ 424-ը, ապա 1979 թ. 750-ը[22]։

---

16 «Народное хозяйство Армянской ССР в 1985 году», с. 282.

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, էջ 290։

19 Նույն տեղում, էջ 330։

20 Հաշվարկը՝ կատարված է «Итоги Всесоюзной переписи населения 1970 г.» т. V, с. 143; «Численность и состав населения СССР. По данным Всесоюзной переписи населения 1979 года», с. 170 ժողովածուների տվյալների հիման վրա։

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում։

Այդ նույն ժամանակահատվածում Հանրապետության քաղաքային բանվորների կրթական ընդհանուր մակարդակի աճն ուներ հետևյալ պատկերը. 1959 թ. յուրաքանչյուր 1000 քաղաքային բանվորից բարձրագույն (այդ թվում և թերի), միջնակարգ մասնագիտական և միջնակարգ (լրիվ և թերի) կրթություն ուներ 509-ը, իսկ 1979 թ.՝ 869-ը[23]։ Ինչպես ցույց են տալիս բերված տվյալները, թեև գյուղական բանվորների կրթական ընդհանուր մակարդակը զգալիորեն բարձրացել էր, բայց այն դեռևս համապատասխան ցուցանիշներով բավական զիջում էր քաղաքային բանվորների մակարդակին։ Դա մասնավորապես պայմանավորված էր նրանով, որ գյուղական բանվորների հիմնական բաղադրամասը կազմող ագրարային բանվորները Հայաստանի բնակլիմայական պայմանների առանձնահատկությունների, աշխատատար ճյուղերի բազմազան լինելու և դրանց մեքենայացման սակավ հնարավորությունների հետևանքով, առավելապես զբաղված էին այնպիսի աշխատանքներում, որոնք կրթական այնքան էլ բարձր մակարդակ չէին պահանջում։ Այնուամենայնիվ, հանրապետության գյուղատնտեսության մեջ գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների կիրառումը և, դրանով պայմանավորված, նրա մեջ ընդգրկված բանվորների մասնագիտական կազմի կատարելագործումն արագացնում էին գյուղական բանվորների կրթական մակարդակի աճը։

Հանրապետության բանվոր դասակարգի կրթական ընդհանուր մակարդակի աճի մասին լրիվ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է վերլուծել նրա տարբեր ճյուղային ջոկատների կրթական կազմը։ Դա հնարավորություն կտա բացահայտելու այն մասնագիտությունների բանվորներին, որոնք իրենց կրթական մակարդակով մոտենում են հատկապես մտավոր աշխատանքով զբաղվածներին։ Այսպես, եթե 1979 թ. ՀՍՍՀ-ում մտավոր աշխատանքով զբաղված յուրաքանչյուր 1000 մարդուց 993-ը ուներ բարձրագույն (այդ թվում և թերի), միջնակարգ մասնագիտական և միջնակարգ (լրիվ և թերի) կրթություն[24], ապա հաշվիչ մեքենաների օպերատորներից՝ 987-ը, փականագործ գործիքագործներից՝ 969-ը, հավաքողներից՝ 963-ը, ժամագործներից և ոսկերիչներից՝ 961-ը, կարգավորողներից՝ 942-ը, ֆրեզերագործներից՝ 938-ը, խառատներից՝ 937-ը, էլեկտրամոնտյորներից՝ 933-ը և այլն[25]։ Իհարկե, այնպիսի խմբերի կրթական ընդհանուր մակարդակի ցուցանիշները, ինչպիսիք ժամագործներն ու ոսկերիչներն են, որոնց թիվը Հանրապետությունում կազմում էր ընդամենը 3517 մարդ, չէին կարող լրջորեն ազդել ամբողջ բանվոր դասակարգի կրթական մակարդակի ընդհանուր ցուցանիշների վրա։ Սակայն էլեկտրամոնտյորները, որոնց թիվը 1979 թ. կազմում էր 16824 մարդ, մեքենաշինության մեջ զբաղված կարգավորողները՝ 14560, խառատները՝ 13413 մարդ[26], հանրապետությունում առավել մասսայական մասնագիտություններն էին և զգալիորեն ազդում էին բանվոր դասակարգի կրթական ընդհանուր մակարդակի վրա։ Բացի բանվորների այս կատեգորիաներից, կրթական բարձր մակարդակով աչքի էին ընկնում նաև տրանսպորտի, առևտրի, հասարակական սննդի բնագավառի աշխատողները։ ՀՍՍՀ բանվոր դասակարգի առանձին ջոկատների կրթական մակարդակը հատկապես արագ տեմպերով էր աճում այն ճյուղերում, որտեղ լայնորեն ներդրվում էին գիտատեխնիկական առաջադիմության նվաճումները (մեքենաշինություն, քիմիա և այլն)։ Դա վկայում է, որ գիտատեխնիկական առաջադիմությունն արագացնում է հանրապետության բանվորական կադրերի կրթական ընդհանուր մակարդակի աճը։ Վերջինս իր հերթին նպաստում է բանվոր դասակարգի մասնագիտական կազմի

---

23 Նույն տեղում։

24 «Численность и состав населения СССР. По данным Всесоюзной переписи населения 1979 года», с. 214.

25 Հայկական ՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության ընթացիկ արխիվ։ Բնակչության մարդահամարի բաժին։

26 Նույն տեղում։

կատարելագործմանը, որը մասնավորապես արտահայտվում է մեքենայացված աշխատանքով զբաղված որակյալ բանվորների տեսակարար կշռի սիստեմատիկ աճով և ձեռքի աշխատանքով զբաղվածների՝ տեսակարար կշռի նվազմամբ։ Այսպես, եթե 1975 թ. հանրապետության արդյունաբերության մեջ մեքենայացված աշխատանքով զբաղված բանվորների տեսակարար կշիռը կազմում էր 42,9 %, իսկ ձեռքի աշխատանքով զբաղվածներինը՝ 48,1 % (առանց մեքենաների և մեխանիզմների վերանորոգմամբ ու կարգավորմամբ զբաղված բանվորների), ապա 1985 թ.՝ համապատասխանաբար 50,9 և 40,1 %[27]։ Տվյալ պրոցեսը բացատրվում է նրանով, որ գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում անցում է կատարվում դեպի մեքենաների որակական նոր համակարգ։ Դա մի կողմից ապահովում է աշխատանքի արտադրողականության աճը, մյուս կողմից՝ արմատապես վերափոխում է աշխատանքի բնույթը։ Վերջինս էլ անդրադառնում է բանվորական մասնագիտությունների վրա, որոնցում սկսում են գերակշռել աշխատանքի մտավոր տարրերը։ Նշված մասնագիտությունների խմբին են պատկանում հավաքողները ու սարքակարգորդները, մեքենավարները ու մոտորիստները, կարգավորողները, որոնց թվաքանակը աճում էր։ Այսպես, 1975—1985 թթ. ՀՍՍՀ արդյունաբերության մեջ հավաքողների ու սարքակարգորդների թվաքանակը ավելացել էր ավելի քան 1,8 անգամ, մեքենավարներինն ու մոտորիստներինը՝ 1,5 և կարգավորողներինը՝ 1,3 անգամ։ Այդ նույն ժամանակահատվածում հնոցապանների թվաքանակը նվազել էր մոտ 6 անգամ, իսկ փաթաթող և վերափաթաթող բանվորներինը՝ ավելի քան 1,1 անգամ[23]։ Ինչպես տեսնում ենք, գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում աշխատանքի առավելապես մտավոր տարրերով հագեցած մասնագիտություններ ունեցող բանվորների թվաքանակը աճում է և, ընդհակառակը, ձեռքի ֆիզիկական ծանր աշխատանք պարունակող մասնագիտություններ ունեցողներինը՝ նվազում։

Մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող որակյալ բանվորական կադրերի պատրաստման գործում մեծ դեր ունի պրոֆտեխուսուցման համակարգը։ Վերջինս 1960—1980-ական թվականներին ՀՍՍՀ-ում զգալիորեն կատարելագործվեց։ Այսպես, եթե 1961 թ. հանրապետությունում գործում էր այդպիսի 12 ուսումնական հաստատություն, ապա 1985 թ.՝ 101[29], որոնցում 170-ից ավելի մասնագիտությունների գծով բանվորական կադրեր էին պատրաստվում։ Պրոֆտեխուսուցման համակարգի ընդլայնումը հանգեցրեց նրա մեջ ընդգրկված սովորողների թվաքանակի կտրուկ աճին. եթե 1966 թ. նշված հաստատություններում սովորում էր 10,9 հազ. մարդ, ապա 1985 թ.՝ 47 հազ.[30]։ Ինչպես տեսնում ենք, գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում պրոֆտեխուսուցման համակարգում բանվորական կադրերի պատրաստման մասշտաբները գնալով մեծանում են։ Այդուհանդերձ, նշված համակարգում պատրաստված բանվորական բարձրորակ կադրերի տեսակարար կշիռը հանրապետության ժողովրդական տնտեսության ճյուղերում դեռևս ցածր էր. 1980-ական թվականների սկզբներին այն չէր անցնում 30—35 %-ից[31]։ Վերջինս պայմանավորված էր նրանով, որ դեռևս դանդաղ էին լուծվում ուսումնարանների կառուցման ու ռայիոնալ տեղաբաշխման, որակյալ երիտասարդ բանվորական կադրերի պատրաստման հարցերը՝ հանրային արտադրության և ժողովրդական տնտեսության հեռանկարային զարգացման պահանջներին հա-

---

27 Նույն տեղում, աշխատանքի և աշխատավարձի վիճակագրության բաժին։

28 Նույն տեղում։

29 «Народное хозяйство Армянской ССР в 1975 году», Ереван. 1976. с. 184; «Народное хозяйство Армянской ССР в 1985 году», с. 217.

30 «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», с. 154; «Народное хозяйство Армянской ССР в 1985 году», с. 217.

31 Հաշվարկը կատարված է՝ „Народное хозяйство Армянской ССР", Ереван. 1982 ժողովածուի 185, 186 էջերի տվյալների հիման վրա։

սապատասխան։ Հանրապետության պրոֆտեխուսուցման համակարգը դեռևս պատրաստում էր պահանջվածից ավել ոչ պահանջարկային մասնագետներ՝ ի վնաս առավել անհրաժեշտ մասնագիտությունների։ Մյուս կողմից, արդյունաբերական որոշ ձեռնարկություններ անհրաժեշտ շահագրգռվածություն հանդես չէին բերում նոր ուսումնարաններ կառուցելու գործում։ Լուրջ դժվարություններ գոյություն ունեին նաև կրթական բարձր մակարդակ ունեցող երիտասարդներին պրոֆտեխուսուցման մեջ ընդգրկելու գործում, որի հետևանքով ուսումնարաններ ընդունվողների կազմում որոշակիորեն նվազում էր միջնակարգ կրթություն ունեցողների բաժինը։ Դա բացատրվում էր նրանով, որ Հայաստանում միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդների ղգալի մասը (հատկապես քաղաքներում) գերադասում էր ուսումը շարունակել բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, իսկ այն պատանիներն ու աղջիկները, որոնք միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո չէին կարողանում նշված հաստատություններն ընդունվել, նախընտրում էին մասնագիտություն ձեռք բերել արտադրության մեջ։ Առավել կարևորագույն պատճառներից էին պրոֆտեխուսումնարանների թույլ կապը հանրակրթական դպրոցների հետ և հատկապես սովորողների մեջ տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների վատ կազմակերպումը։ Այդ էր վկայում այն փաստը, որ հանրակրթական դպրոցների շրջանավարտների մի մասը պրոֆտեխուսումնարանները հիմնականում դիտում էին որպես բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար առավելություններ ձեռք բերելու միջոց։ Այս թերությունների վերացմանը կնպաստի հանրակրթական և պրոֆեսիոնալ դպրոցի վերոհիշյալ ռեֆորմի կենսագործումը, որն ուղղված է դպրոցի և արտադրության կապի ամրապնդմանը, սովորողների մասնագիտական կողմնորոշման բարելավմանն ու ընդհանրապես, պրոֆտեխուսուցման համակարգի լիակատար համապատասխանեցմանը ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխություններին։

Պրոֆտեխուսուցման համակարգը մեծ նշանակություն ուներ գյուղի երիտասարդությանը բանվոր դասակարգի մեջ ընդգրկելու գործում։ Եթե 1960-ական թվականների սկզբին պրոֆտեխուսումնարանները հիմնականում կենտրոնացված էին Երևանում, Լենինականում և Կիրովականում, ապա հետագա տարիներին դրանք աստիճանաբար տարածվեցին նաև այն քաղաքներում ու շրջաններում, որտեղ սկսում էր զարգանալ արդյունաբերությունը։ Սա, մի կողմից, նպաստում էր հանրապետության տարբեր շրջաններում գործող արդյունաբերական ձեռնարկությունները բանվորական որակյալ կադրերով համալրելուն, մյուս կողմից՝ կրճատում էր գյուղական երիտասարդության հոսքը դեպի խոշոր քաղաքները։

Պրոֆտեխուսուցման համակարգը մեծ դեր էր խաղում նաև արտադրության մեջ ընդգրկված բանվորների վերապատրաստման գործում (երեկոյան և հերթափոխային ուսումնարաններում)։ Վերջիններիս շրջանավարտների թվաքանակը հանրապետությունում անընդհատ աճում է։ Այսպես, եթե 1972 թ. այն կազմում էր 2,2 հազ. մարդ, ապա 1985 թ.՝ 6,7 հազ.[32]։ Բանվորական կադրերի վերապատրաստման նման ձևը հետագայում ավելի կկատարելագործվի, քանի որ այն հնարավորություն է ընձեռում առավել խորությամբ տիրապետելու ժամանակակից բանվորական մասնագիտությունները։ Այս ամենի հետ մեկտեղ դեռևս մեծ դեր ուներ բանվորական կադրերի պատրաստումն անմիջապես արտադրությունում։ Այդ է պատճառը, որ 1960—1980-ական թվականներին բանվորների պատրաստման նշված ձևը հանրապետությունում բավականին լայն թափ ստացավ։ Այսպես, եթե 1960 թ. ՀՍՍՀ արտադրական ձեռնարկություններում նոր մասնագիտություններ էին ստացել 19,2 հազ. և իրենց որակավորումն էին բարձրացրել 35 հազ. բանվորներ, ապա

---

32 «Народное хозяйство Армянской ССР в 1972 году», Ереван, 1973, с. 121; «Народное хозяйство Армянской ССР в 1985 году», с. 217.

1985 թ. այդ թվերը համապատասխանաբար կազմեցին 73,7 հազ. և 319,8 հազ.[33]։ Ինչպես տեսնում ենք, ձեռնարկություններում բանվորների պատրաստումն ու վերապատրաստումը զգալիորեն աճում էր։ Սա օրինաչափ երևույթ էր, քանի որ գիտատեխնիկական առաջադիմության լայն տարածումը հանգեցնում էր նոր ճյուղերի և ձեռնարկությունների առաջացմանը։ Դա իր հերթին պահանջում էր բանվորական համապատասխան կադրեր, որոնց պատրաստումը միայն պրոֆտեխուսուցման համակարգը դեռևս ի վիճակի չէր ապահովելու։ Սակայն բանվորների պատրաստման տվյալ ձևն ունի թերություններ։ Ժամանակակից արտադրական հարաբերությունների զարգացման բարձր մակարդակը բանվորներից պահանջում է տեսական և գործնական բազմակողմանի պատրաստվածություն, որն արտադրական ուսուցումը չի ապահովում։ Նշենք, որ տարբեր ձեռնարկություններում պատրաստված միևնույն մասնագիտությունների բանվորներն ունեն որակավորման տարբեր մակարդակ։ Սա վկայում է, որ արդի ժամանակաշրջանում պրոֆտեխուսուցման համակարգում բանվորական կադրերի պատրաստումն ունի անվիճելի առավելություն։ Իհարկե, այս ամենը չի նշանակում, որ արտադրական ուսուցումը, որպես բանվորական կադրերի պատրաստման ձև, կորցրել է իր նշանակությունը։ Այն կպահպանվի նաև առաջիկայում, քանի որ օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք պատճառներով բանվոր դասակարգի շարքերը համալրող նոր աշխատուժի որոշ մասը արտադրություն է մտնում առանց մասնագիտական պատրաստվածություն ունենալու։ Սակայն ապագայում արտադրությունում բանվորական կադրերի պատրաստումը կրելու է օժանդակ բնույթ՝ պայմանավորված ժողովրդական տնտեսության պահանջներին պրոֆտեխուսուցման համակարգում պատրաստված բանվորական կադրերի թվաքանակի համապատասխանեցմամբ։ Ձեռնարկություններում արտադրական ուսուցման հիմնական նպատակը պետք է հանդիսանա բանվորների վերապատրաստումն ու որակավորման բարձրացումը։

Գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում բանվոր դասակարգի զարգացման կարևորագույն առանձնահատկություններից է նրա ներսում նոր խավի առաջացումը։ Վերջինիս պատկանող բանվորների գործունեության մեջ զգալի տեղ է գրավում մտավոր աշխատանքը, և նրանց հատուկ է բարձր կրթական, մասնագիտական ու ընդհանրապես կուլտուրտեխնիկական մակարդակ։ Միութենական մասնագիտական գրականության մեջ այս խավի վերաբերյալ դեռևս միասնական ընդհանուր կարծիք գոյություն չունի։ Մի շարք հետազոտողներ տվյալ խավը բնութագրում են որպես «անցումային» կամ «սահմանային», իսկ նրա ներկայացուցիչներին անվանում են «բանվոր-մտավորականներ»[34]։ Մենք համամիտ ենք այն ուսումնասիրողների հետ, որոնք գտնում են, որ նշված խավը դուրս չի գալիս բանվոր դասակարգի սահմաններից և նրա անբաժանելի մասն է։ Այս պատճառով տեսականորեն ճիշտ չէ տվյալ խավը համարել որպես «անցումային» կամ «սահմանային», քանի որ դա պարզեցնում է հասարակության սոցիալական միատարրության ձևավորման պրոցեսը[35]։

Վերոհիշյալ խավի առաջացումը և զարգացումը ցայտուն դրսևորվում է նաև ՀՍՍՀ-ում, որը հանրապետության բանվոր դասակարգի որակական աճի հեռանկարային ուղղություններից է։

Այսպիսով, գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը համակողմանիորեն զարգանում է,

---

33 «Народное хозяйство Армянской ССР в 1965 году». Ереван, 1966, с. 203; «Народное хозяйство Армянской ССР в 1985 году», с. 217.

34 Մանրամասն տե՛ս Р. Г. Кузеев, М. Б. Ямалов, Количественные и качественные изменения в составе советского рабочего класса на современном этапе (Обзор литературы), («История СССР», 1986, № 6, с. 77).

35 Նույն տեղում։

որն արտահայտվում է նաև նրա քանակական և որակական փոփոխություններով։ Մասնավորապես կատարելագործվում են բանվոր դասակարգի ճյուղային կառուցվածքը և սեռատարիքային կազմը, աճում է նրա կրթական մակարդակը, բարձրանում մասնագիտական պատրաստվածությունը։ Այս ամենը ՀՍՍՀ բանվոր դասակարգի ստեղծագործական մեծ պոտենցիալի վկայությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հաջողությամբ կենսագործելու ՍՄԿԿ XXVII համագումարի առաջադրած երկրի տնտեսական մեխանիզմի վերակառուցման, արտադրության արդյունավետության բարձրացման, կառավարման կատարելագործման և գիտատեխնիկական առաջադիմության արագացման խնդիրները։

РАБОЧИЙ КЛАСС АРМЯНСКОЙ ССР В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ НАУЧНО-ТЕХНИЧЕСКОГО ПРОГРЕССА

РУБЕН АЗИЗБЕКЯН

Резюме

В исследуемый период под влиянием научно-технического прогресса происходят коренные изменения в составе рабочего класса Армянской ССР, увеличивается его численность. Особенно высокие темпы роста рабочих наблюдаются в тех отраслях, которые обуславливают научно-технический прогресс и, одновременно, постепенно они снижаются в тех отраслях, где широко применяются его достижения. На основе перераспределения производительных сил в производственных и непроизводственных сферах в пользу второй увеличивается численность рабочих, занятых в сфере обслуживания. Серьезные изменения происходят также в половозрастной структуре рабочего класса республики. В его составе увеличивается доля женщин и молодежи, что способствует повышению его образовательного уровня. С увеличением численности рабочих с высоким образовательным уровнем снижается численность рабочих, имеющих начальное образование. Происходит также сближение образовательного уровня различных отрядов рабочего класса республики. Особенно высокие темпы роста образовательного уровня рабочего класса наблюдаются в тех отраслях, где наиболее широко внедряются достижения научно-технического прогресса. Все это способствует совершенствованию профессионально-квалификационного состава рабочего класса. Последнее базируется на достижениях советской системы подготовки и переподготовки кадров.

В условиях научно-технического прогресса одним из перспективных направлений качественного роста рабочего класса является процесс образования внутри его слоя «рабочих широкого интеллектуализированного труда», которые отличаются достаточно высоким культурно-техническим уровнем.